

ՊԱՊԸ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԿՈՉ ՈՒՂՂԵՑ



Հռոմի Պենտիքթոս 16-րդ Պապը երկն սկսաւ դէպի Սուրբ Հոլեր իր հավուպետական այցելութեան:

Պենտիքթոս Պապը իր ուղեւորութիւնը սկսաւ Յորդանան այցելութեամբ, ուր Ապտալլա երկրորդ վեհապետը անձամբ ընդունեց Հռոմի քահանայապետը: Այս առիթով արտասանած իր խօսքին մէջ, Պապը երկխօսութեան նոր էջ մը բանալու կոչ ուղղեց

ՄԵԼԻՍ ԿԸ ՄԵԿՆԱԲԱՆԷ

Լիբանանեան «Ալ Մուսթափա» օրաթերթին լոյս քննարկած հարցազրոյցի մը մէջ, միջազգային դատական ատենանի մահկան հատախազ Տեթիֆ Մելիս կ'ըսէ, թէ միջազգային ատենանը արձակած էր չորս սպանները արգելափակելու որոշումը, իսկ եթէ առնուած քայլը սխալ էր, ատենանը իր օրին կրնար վերանայիլ իր որոշումին: Մելիս իր հարցազրոյցին ընթացքին կ'ըսէ, թէ լիբանանեան, Ֆրանսական եւ գերմանական օրէնսդրութիւնը կ'արտօնեն հարցաքննութեան համար երկարամասնաժամ ձեռքարկութիւնները, այսինքն՝ որեւէ պայմանաժամ կամ ժամանակ չեն սահմաներ ձեռքարկութիւններուն: Մելիս կ'ըսէ, թէ սպաններուն ձեռքարկութիւնը եւ հետաքննութեան ընթացքը

յննամ չէր միայն Ջուհէյր Մատիքի վկայութիւններուն վրայ, որոշումը առնուած էր նաեւ նկատի ունենալով այլ հարցաքննութիւններ: Մելիս օրինակ կը բերէ Գօրավարի մը կատարած այն խտտովանութիւնը, ուր գնդապետ Մուսթաֆա Համտան Ռաֆիք Հարիթին պտոյտի մը որկելու մասին կ'ակնարկէ:


ՄԵԹԻ ՄԵՐԺ ԹՈՒՐԱՐԳԻՏԵԱՆ ԿԸ ԸԱՐՈՒՆԱԿԷ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Երեսփոխան Մերթ Թուրարգիտեան այցելութիւնը տուաւ Պլյուսի Յոյն Ուղղափառ եկեղեցոյ Առտէ եպիսկոպոսին: Սոյն հանդիպումէն ետք, Թուրարգիտեան հերթեց հակասութիւններու առկայութիւնը Մարտ 14-ի Ուժերէն ճեղք: Ան ըսաւ, թէ տեսակետներու տարբերութիւն գոյութիւն ունի, որովհետեւ երկու անձեր միեւնոյն աթոռին համար առաջադրած են իրենց թեկնածութիւնը: Թուրարգիտեան ընդգծեց, թէ պիտի շարունակէ իր թեկնածութիւնը:

ԳԵՐՄԱՆԻԱ ԿԸ ՄԱՂԹԷ, ՈՐ ԻՍՐԱՅԷԼ ՅԱՐԳԷ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Ավիգլոր Լիպերման այցելեց իր երուսակաւ շրջագայութեան վերջին կայարանը՝ Գերմանիա: Ան հանդիպում մը ունեցաւ գերմանացի իր պաշտօնակիցին՝ Ֆրենց Վալթըր Շթայնմայէրի հետ:

Սոյն հանդիպումին լոյսին տակ, Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, ուր կ'ըսուի, թէ Գերմանիա մաղթեց, որ Իսրայէլի նոր կառավարութիւնը քայլ պահէ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին հետ եւ ընդառաջէ կողք կողքի երկու դրացի պետութիւններու ընդհանրին:



Իսրայէլի փոխ արտաքին գործոց նախարար Տանի Եյալոն ընդունեց ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերուն ընդհանուր պատասխանատու Ալէն Լը Ռոյը: Իր ֆրանսացի հիւրին հետ ունեցած հանդիպումին ընթացքին, Եյալոն ըսաւ, թէ հարաւային Լիբանանի Ղաճար գիւղաքաղաքէն հեռանալու քննարկումները իսրայէլեան նոր արտաքին քաղաքականութեան մէկ մասնիկը կը կազմեն: Եյալոն վճռական քայլեր պահանջեց միջազգային ընտանիքէն Յրգալլայի զենքին հարցը լուծելու նպատակաւ: Իսրայէլի անվտանգութեան հետ առնչուած մէկ այլ հարցով, թրքական աղբիւր մը յայտարարեց, թէ Անգարա պիտի շարունակէ Իսրայէլին իր օդային տարածութիւնը օգտագործելով Թուրքիոյ դրացի որեւէ պետութեան վրայ յարձակիլ:

ՄԱՐԳՍԵԱՆ-ԿԻՒԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Փրակայի մէջ, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան հանդիպում մը ունեցաւ Թուրքիոյ նախագահ Ապտալլա Կիւլի հետ: Հանդիպումին նաեւ մասնակցեցան զոյգ երկիրներու արտաքին գործոց նախարարները՝ Էտուարտ Նալպանտեանը եւ Անձէտ Տավուրօղլուն: Հայաստանի նախագահին մամուլի գրասենեակը հաղորդեց, թէ սոյն հանդիպումին ընթացքին, նախապէս կնքուած պայմանագրութիւնները յարգելու համաձայնութիւն մը գոյացած է երկու պետութիւններուն միջեւ:

ՊՐԱՅՁԱ. «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՆԵՐՔԻՆ ՀԱՐՑ Է»

ԵԱՀԿ-ի Մինսքի խումբի ամերիկացի համանախագահ Մեթիւ Պրայզա յայտարարեց, թէ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը Հայաստանի եւ Ատրպէյճանի վեաբերող հարց մըն է: Պրայզա նաեւ նշեց, որ Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահները հակամարտութեան կարգաւորման հիմնական խնդիրներուն շուրջ համաձայնութիւն մը գոյացուցած են արդէն: Ամերիկացի դիւանագետը ընդգծեց, որ հայ-թրքական յարաբերութեան կարգաւորումը չ'ընդգրկելու Ղարաբաղի գործընթացը:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ

Հայ Ազգային Գոնկրէսը դատապարտեց «Շանթ» հեռատեսիլի կայանի հաղորդավար Նուր Մնացականեանի դէմ կատարուած բռնութիւնը: Հրապարակային յայտարարութեամբ մը, Հայ Ազգային Գոնկրէսը իշխանութիւններէն պահանջեց անմիջական հետաքննութիւն մը բանալ միջադէպին պայմաններուն շուրջ, այլապէս. «յանցանքին պատասխանատուութիւնը գործող իշխանութիւններուն վրայ ծանրացած պիտի ըլլայ»: Կ'երակացնէ յայտարարութիւնը:

ԵԱՀԿ-Ի ՀԱՄԱՆԱԽԱՎԱԶՆԵՐԸ ԳՈՉ ԵՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԷՆ

ԵԱՀԿ-ի Մինսքի խումբի համանախագահներ Ետիք Մերգլիաքով, Պեռնար Ֆասիլէ, Մեթիւ Պրայզա, Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն՝ Փրակայի մէջ ունեցած հանդիպումէն ետք հրապարակեցին հաղորդագրութիւն մը, ուր դիտել կու տան, որ Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահներուն միջեւ իւրաքանչիւր հեռացում առիթ կը մտնէ հակամարտութեան լուծումը:

Համանախագահները կ'անելցնեն, թէ Յունիսի սկիզբը պիտի այցելեն Երեւան եւ Պաքո:

ՀԱՅԱՍՏԱՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԲ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

Չեխիոյ մայրաքաղաք Փրակայի մէջ տեղի ունեցաւ Եւրոպական Միութեան Արեւելեան Գործընկերութեան անդրանիկ գազաթնամողովը: Այս նախաձեռնութեան մէջ ներգրաւուած են Նախկին Խորհրդային Միութեան վեց հանրապետութիւններ՝ Հայաստան, Կրաստան, Ատրպէյճան, Պելառուս, Մոլտովա եւ Ուքրաինա: Այս նախաձեռնութիւնը կը նախատեսէ Եւրոպական Միութեան հետ կապերու ամրապնդում, առեւտրական-տնտեսական յարաբերութիւններու խորացում եւ անցադիր բարձրագոյն զործողութեան դիւրացում:

ԿԵԱՆՔԸ Հ. Կ. Բ. Մ.-Ի ՍԱՀԱԿԵԱՆ-Լ. ՄԿՐՏԻՉԵԱՆ ԳՈԼԷՃԷՆ ՆԵՐՍ 24 ԱՊՐԻԼԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցական համակարգին մէջ ինչ կայ աւելի գեղեցիկ քան համագործակցական աշխատանքը եւ այդ մէկը առաւել եւս կը գեղեցկանայ երբ կը համադրուի ուսուցիչ-աշակերտ փոխ յարաբերութեամբ, մասնաւոր երբ այդ կ'իյնայ Մեծ Եղեռնի յիշատակի ոգեկոչման ծիրէն ներս:

Չառկուան երկար արձակուրդէն դպրոց վերադարձին, այլ խօսքով, Երեքշաբթի, 21 Ապրիլի առաւօտեան ժամերէն սկսեալ սովորական կեանքը փոփոխութիւն կրած էր Հ. Կ. Բ. Մ.-ի Սահակեան-Լ. Սկրտիչեան Գոլէճի ամօրեայէն ներս: Աշակերտները լծուած էին մեղուաչան աշխատանքի, լաւապէս ներկայացնե-



Սահակեան-Լ. Սկրտիչեան Գոլէճի աշակերտներ ծաղիկներ կը տեղադրեն Նահատակ հայ մտաւորական, ցեղասպանութեան զոհ դարձած Ռուբէն Սեւակի արձանին առաջ:

լու երկու օր յետոյ կայանալիք Ապրիլ 24-ի յիշատակի ոգեկոչումը: Ոմանք զբաղած էին պատի թերթով, ոմանք կ'աշխատէին սրահէն ներս, իսկ ուրիշներ՝ ազգային-հայրենասիրական-յեղափոխական երգերու սիմուլումով:

Վերջապէս հասաւ սպասուած պահը: 23 Ապրիլ 2009 կեսօրեան ժամերուն դպրոցեայ դասաւանդութիւնը եւ Արմէն եւ Փերսպիէ Ըրեճեան հանդիսարահին մէջ սկսաւ մեր մէկուկէս միլիոն Նահատակներուն նուիրուած ոգեկոչման ձեռնարկը:

Գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը: Զայլերգներու ունկնդրութենէն ետք, 9-րդ դասարանէն Փամելա Քիսո կատարեց բացման խօսքը: Ան շեշտը դրաւ պայքարը շարունակելու մինչեւ մեր պահանջատիրութեան արդար հատուցման օրը: Օրուան հանդիսավարը հրապարակեց աշակերտները, մէկ վայրկեան յոտնկայս յարգելու մեր հին ու նոր Նահատակներուն յիշատակը:

Ապա, յաջորդաբար ելոյթ ունեցան, Տէնի Մինասեան, որ ընթերցեց Թալէաթի «Հայաշինչ հրամանագիրը ուղղուած Հայկազի Նահանգապետին», իմբային արտասանութիւն



Սահակեան-Լ. Սկրտիչեան Գոլէճի երկու աշակերտներ ծաղիկներ կը տեղադրեն հայ յեղափոխութեան մեծն առաջնորդ Փարամազի կիսանդրիի առաջ:

«Կոռնկ, Ուստի՞ Կու Գաս» 8-րդ դասարանէն խումբ մը աշակերտներ, 9-րդ դասարանի աշակերտ Նարեկ Սկրտիչեան դաշնամուրի վրայ նուազեց երաժշտական կտոր մը, Սեւան Երեմեան ասմունքեց Վ. Դակիթեանի «Տեր Չօր» հոգեցունց քերթուածը, 9-րդ դասարանէն երեք աշակերտներ ընթերցեցին



Սահակեան-Լ. Սկրտիչեան Գոլէճի 7-րդ դասարանի աշակերտներէն մաս մը յայտագրի մաս կը կազմեն:

«Միացեալ Նահանգներու Ներկայացուցչական Տան անդամներու կարծիքները, Հայկական Ցեղասպանութեան մասին», «Ատանայի Ողբը», «Արդեօք Ովքեր են», «Ձայն Տուր Ով Ֆետա» ազգային երգերը մեներգեց Ռաբէլ Ընաւուսեան, Գեորգ

Էմինի «Երգ Կռունկի Մասին» իմբային արտասանութեամբ ելոյթ ունեցան 7-րդ դասարանէն խումբ մը աշակերտներ: Աշակերտութեան խօսքը փոխանցեց 9-րդ դասարանէն Յարութիւն Չրթիկեան: Ան ըսաւ, թէ 94 տարիներ անցած են, հայը պահանջատէր է եւ չի մոռնար պապենական հողերը: Իսկ հայ աշակերտութիւնը պատրաստ է հետապնդելու իր ազգային սըրբազան դատը: Պարոյր Սեւակի «Դօղանչ Եղեռնական» իմբային արտասանութեամբ ելոյթ ունեցաւ 9-րդ դասարանը, յայտագիրը արարտեցաւ Արա Գեորգեանի «Տէլ Եմաման» պարով, կատարողներ՝ Սեւան Կեօքլեօգեան, Սեւան Երեմեան եւ Մարիա Ընաւուսեան:

Ապա, խօսքը տրուեցաւ Գոլէճի տնօրէն պր. Յակոբ Կերկերեանին, փոխանցելու օրուան պատգամը, որ մատչելի բովանդակութեամբ եւ ձեւով անդադարձաւ ապրիլեան եղեռնի գործած աներներուն ֆիգիւրական, նիւթական թե բարոյական: Ան մանրամասն բացատրեց Մեծ Եղեռնի ծաղիքը, հայ ժողովուրդին զանգուածային բնաջնջումը, որ էր 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը: Յարգելի պր. տնօրէնը յորդորեց աշակերտները տեր կանգնելու մեր Ոսկեղնիկին եւ քաջածանօթ դառնալու հայոց պատմութեան: Տոգորեց, որ Արարատ լեռան կանչը միշտ վառ պետք է մայ մեր սրտերուն մէջ ու եզրակացուց, երբ որ ժամանակը հնչէ եւ հայոց հողերը մեզ կանչեն, ըլլանք միշտ պատրաստ:

Աշակերտները դուրս գալով սրահէն, ծաղիկներու զետեղեցին մեծ յեղափոխական առաջնորդ Փարամազի կիսանդրիին, ինչպէս նաեւ մեծ բժիշկ եւ բանաստեղծ Ռուբէն Սեւակի անուը կրող թանգարանի մուտքին գտնուող Սեւակի արձանին առջեւ խոնարհելով, իրենց յարգանքի տուրքը մատուցեցին բոլոր հայ զրագետ մտաւորականներու յիշատակին:

Ապրիլ 24-ի ոգեկոչմամբ, Սահակեան-Լ. Սկրտիչեան Գոլէճի աշակերտները անգամ մը եւս արտայայտեցին մէկուկէս միլիոն Նահատակներու կտակին յանձնառու մնալու իրենց վճռականութիւնը եւ վերանորոգեցին իրենց ուխտը հայ ժողովուրդի բոլոր իրաւունքներուն ձեռք բերման համար մղուող վճռական պայքարին, մինչեւ ամբողջական յաղթանակ:

Ապրիլ 24-ի ոգեկոչմամբ, Սահակեան-Լ. Սկրտիչեան Գոլէճի աշակերտները անգամ մը եւս արտայայտեցին մէկուկէս միլիոն Նահատակներու կտակին յանձնառու մնալու իրենց վճռականութիւնը եւ վերանորոգեցին իրենց ուխտը հայ ժողովուրդի բոլոր իրաւունքներուն ձեռք բերման համար մղուող վճռական պայքարին, մինչեւ ամբողջական յաղթանակ:



Հ. Կ. Բ. Մ.-ի Սահակեան-Լ. Սկրտիչեան Գոլէճի տնօրէն պր. Յակոբ Կերկերեան կը բանախօսէ 24 Ապրիլի ցեղասպանութեան մասին: